

«ԱՅՔ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների շահերի ընդհանրության և կամավորության սկզբունքի հիման վրա, հոգևոր և ոչ կյուբական այլ պահանջմունքների բավարարման նպատակով, նրանց կողմից կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական, բարեգործական, սոցիալական, մշակութային և այլ հանրագուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնադրվել է 2011 թվականի հունիսի 13-ի թիվ FBT03-1102-V(0613) որոշմամբ և գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), ՀՀ միջազգային պայմանագրերին, իրավական այլ ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան: Հիմնադրամը հանդիսանում է «Վեմավան» բարեգործական հիմնադրամի (գրանցման թիվ՝ 222.160.960375) իրավահաջորդը փոխանցման ակտի համաձայն (միացում):
- 1.2. Հիմնադրամի գործունեությունը հիմնված է օրինականության, հրապարակայնության, ինքնակառավարման, իրավահավասարության և կամավորության սկզբունքների վրա:
- 1.3. Հիմնադրամի անվանումն է.
Հայերեն լրիվ՝ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ, կրճատ՝ «Այբ դպրոց» հիմնադրամ
Անգլերեն լրիվ՝ «Ayb Learning Hub» Foundation, կրճատ՝ «Ayb school» Foundation
Ռուսերեն լրիվ՝ Фонд «Образовательный хаб Айб», կրճատ՝ «Школа Айб» Фонд
- 1.4. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեն:
- 1.6. Հիմնադրամի հիմնադիրն է.
«Այբ» կրթական հիմնադրամը, պետ. գրանցման համար 222.160.00673, պետ. գրանցման վկայականի համար 03Ա073210, ՀՎՀՀ 01558429, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կորյունի 19 ա:
- 1.7. Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իրենց կողմից ստեղծված Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար:
- 1.8. Հիմնադրամը, համաձայն Օրենքի, պարտավոր է ամեն տարի հաշվետվություն հրապարակել իր գույքի օգտագործման մասին:
- 1.9. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), կարող է ունենալ դրոշմներ և բլանկեր, խորհրդանիշ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային,

առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ ռեկվիզիտներ: Հիմնադրամն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

- 1.10. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:
- 1.11. Հիմնադրամը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անուկից կնքել պայմանագրեր, համաձայնագրեր, և այլ գործարքներ, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.12. Հիմնադրամը, սույն կանոնադրությանը համապատասխան, սեփականատիրոջ իրավունքով իրականացնում է իր գույքի տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը:
- 1.13. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և դրանից դուրս կարող է ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Հիմնադրամի անուկից՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:
- 1.14. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն Օրենքով նախատեսված դեպքերում և Օրենքով սահմանված կարգով:
- 1.15. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ:
- 1.16. Հիմնադրամն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր իրավունքների պաշտպանության իրավունք:
- 1.17. Հիմնադրամը կանոնադրությամբ թվարկված նպատակները և խնդիրները հետապնդելիս կարող է անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.
 - Կրթական, մշակութային, սպորտային վճարովի ծրագրերի իրականացում,
 - Կրթական հաստատությունների կառավարում,
 - Շարժական և /կամ անշարժ գույքի վարձակալությամբ հանձնում, այդ թվում բայց ոչ միայն ուսումնական տնտեսության շարժական գույք,
 - Սննդի արտադրություն, պատրաստում և իրացում,
 - Գովազդային բնույթի ծառայությունների մատուցում, այդ թվում տարածքի օգտագործմամբ,
 - Տեսաֆիլմերի պատրաստում և իրացում, այդ թվում տեսաերիզների և ձայնասկավառակների պատրաստում և իրացում,
 - Հուշանվերների պատրաստում և իրացում,
 - Հրատարակչական բնույթի գործունեություն,
 - Ցուցահանդես-վաճառքների կազմակերպում և/կամ կառավարում,
 - Տրանսպորտային փոխադրումների ծառայությունների մատուցում:
- 1.18. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար իրավունք ունի ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը:

- 1.19. Օրենքով սահմանված գործունեության որոշ տեսակներով Հիմնադրամը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Հիմնադրամը, բացի լիցենզավորվող գործունեությունից, այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Հիմնադրամը լիցենզիայի գործողության ժամանակ իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ՝ բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեության, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:
- 1.20. Հիմնադրամը՝ Օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է վերակազմակերպվել:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

- 2.1. Հիմնադիրների՝ հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:
- 2.2. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող ու իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցներն իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:
- 2.3. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամով, արտարժույթով և այլն:
- 2.4. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցները, գոյացման աղբյուրներն են՝
 ա/ հիմնադիրների կողմից իրականացվող ֆինանսական և նյութական /ուսև անշարժ և շարժական գույքի տեսքով/ ներդրումները,
 բ/ քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից բարեգործական նվիրատվությունները և նվիրաբերությունները,
 գ/ դրամաշնորհները,
 դ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:
- 2.5. Հիմնադրամի կազմավորման, զարգացման և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից կարող են շնորհվել պատվավոր կոչումներ՝ հոգաբարձուների խորհրդի ձայների պարզ մեծամասնությամբ:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

- 3.1. Հիմնադրամի հիմնական նպատակներն են.
- Կրթական և համայնքաստեղծ ծրագրերի իրականացում, այդ թվում՝ ՀՀ կառավարության առ 14 հունվարի 2010 թ. թիվ 50-Ա որոշմամբ հաստատված «Այբ կրթական հանգույց» ծրագրի,
 - Բարձրորակ, մրցունակ, նորարարական օրինակելի կրթական միջավայրի ստեղծում Հայաստանում և Հայաստանից դուրս,

- ՀՀ կրթական համակարգի կատարելագործմանը և զարգացմանն աջակցություն,
- Ուսումնական և կրթական գործունեության իրականացում,
- Աջակցություն դպրոցականներին և երիտասարդներին ուսման հարցում և իրենց կարիերայի զարգացման գործում, կրթական ոլորտի կազմակերպություններին, աշխատակիցներին օժանդակություն և սրանց շահերի պաշտպանություն:

3.2. Հիմնադրամի հնարավոր շահառուների խմբերն են.

- Դպրոցականները, երիտասարդները և սրանց ծնողները/խնամակալները,
- Կրթական ոլորտի հաստատությունները և դրանց աշխատակիցները,
- Կրթական ոլորտի զարգացմանը նպաստող, կրթական ոլորտի աշխատակիցներին օժանդակող, դպրոցականներին և երիտասարդներին աջակցող կազմակերպությունները և դրանց աշխատակիցները:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ. ՀՈԳԱՔԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

- 4.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, հիմնադրամի կառավարիչը՝ գործադիր տնօրենը և կոլեգիալ այլ մարմին /դպրոցի ուսումնական, ակադեմիական կամ այլ խորհուրդ/:
- 4.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է:
- 4.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատվում է Հիմնադրամի՝ Նոր հոգաբարձուների խորհրդի անհատական կազմի ձևավորման պահին գործող հոգաբարձուների խորհրդի կողմից համաձայն սույն կանոնադրության և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված «Հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգի»:
- 4.4. Հոգաբարձուների խորհրդի անհատական կազմի ձևավորման գործընթացում թեկնածուներն ընտրվում և հաստատվում են հետևյալ 7 /յոթ/ դասային խմբերին համապատասխանելու հիմքով, ընդ որում, դասային խմբերի հիման վրա խորհրդի Նոր կազմը իրավագոր է 2019 թվականի դեկտեմբերի 1-ից (խորհրդի Նոր կազմի գործողության սկիզբ).
- 1) Ռազմավարական հովանավոր /առավելագույնը ՀԽ-ի 2 անդամի ներգրավվածություն,
 - 2) Խոշոր հովանավոր /առավելագույնը ՀԽ-ի 2 անդամի ներգրավվածություն՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ/,
 - 3) Շարունակական հովանավոր /առավելագույնը ՀԽ-ի 3 անդամի ներգրավվածություն՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ/,
 - 4) Շարունակական հովանավոր՝ /առավելագույնը ՀԽ-ի 2 անդամի ներգրավվածություն/,

- 5) Ռազմավար¹ /առավելագույնը Հխ-ի 1 անդամի ներգրավվածություն/,
 - 6) «Այբ» դպրոցի շրջանավարտ² /առավելագույնը Հխ-ի 1 անդամի ներգրավվածություն՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ/,
 - 7) Ուսուցիչների խմբի կողմից ընտրված ներկայացուցիչ³ /առավելագույնը Հխ-ի 1 անդամի ներգրավվածություն/:
- 4.5. Եթե Հոգաբարձուների խորհրդի առաջադրված թեկնածուն միաժամանակ բավարարում է մեկ կամ ավելի դասային խմբին ներկայացվող պահանջներին, ապա նա կարող է ընտրել բոլոր այդ դասային խմբերում և առաջադրվել միայն մեկ դասային աստիճանով՝ իր նախընտրությամբ⁴:
 - 4.6. Հոգաբարձուների խորհրդի անհատական կազմի ձևավորմանը վերաբերող դրույթները, ինչպես նաև գործունեության կազմակերպման այլ առանձնահատկությունները սահմանվում են Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ներքին կանոնակարգերով՝ մինչև 2019 հոկտեմբերի 1-ը:
 - 4.7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական կազմի լիազորությունների ժամկետ է սահմանվում երկու տարի՝ հաշվարկված Հխ նոր կազմի ձևավորման սույն կանոնադրության 4.4. կետով սահմանված օրվանից: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները, որոնք ստանձնվել են հոգաբարձուների՝ արդեն իսկ ձևավորված խորհրդի կազմում, դադարում են հոգաբարձուների այդ խորհրդի լիազորությունների դադարմամբ /ավարտմամբ/: Ընդ որում սույն կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատման պահին գործող Հոգաբարձուների խորհրդի կազմը իրավագոր է մինչև սույն կանոնադրության 4.4. կետով սահմանված ժամկետը ներառյալ:
 - 4.8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 12 /տասներկու/ անդամից, որոնք ընտրվում են սույն կանոնադրության 4.4. կետով սահմանված յոթ դասային խմբերից: Հխ անդամները ձայների պարզ մեծամասնությամբ իրենց կազմից ընտրում են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին: Հոգաբարձուների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
 - 4.9. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է հոգաբարձուների խորհրդի գործող կազմի կողմից մինևսույն դասային խմբից ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին գործադիր տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

¹ Ռազմավարն ընտրվում է արդեն իսկ հաստատված Հխ մնացյալ վեց դասային կարգերի ներկայացուցիչների կողմից Հխ կազմի հաստատումից հետո մեկամսյա ժամկետում ըստ անհրաժեշտության՝ կապված տվյալ պահին Հխ գործունեության օրակարգում առկա հարցերի առանձնահատկություններից:

² Շրջանավարտների ընտրությունը կատարվում է Հխ կազմում երկու տարին մեկ այլ շրջանավարտի ընդգրկման սկզբունքով՝ տեսակետների և կարծիքների բազմազանությունը Հխ որոշումների կայացման գործընթացում արդյունավետ ապահովելու նպատակով:

³ Ներկայացուչի համար պարտադիր է կրթության ոլորտի հետ կապը և տարիների փորձառությունը:

⁴ Ներդասային ընտրությունների առանձնահատկություններն ու թեկնածուներին ներկայացվող պահանջները սահմանված են Հիմնադրամի ներքին կանոնակարգերով:

- 4.10. Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադրամի գործադիր տնօրենը տեղեկացնում է, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին՝ թեկնածուներ առաջադրել:
- 4.11. Հե նիստերին խորհրդակցական ձայնով և կամ միայն մասնակցության իրավունքով ընտրվող անձանց և/կամ մարմինների հարցի որոշումը վերապահված է բացառապես Հե-ին՝ ձայների պարզ մեծամասնությամբ:
- 4.12. Հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են՝
- ա) հիմնադրամի ռազմավարական ծրագրի /ծրագրերի/ հաստատումը,
 - բ) հիմնադրամի բյուջեի և դրանում կատարվող փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,
 - գ) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,
 - դ) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
 - ե) հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
 - զ) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
 - է) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
 - ը) սույն կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը,
 - թ) սույն կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների ընդունումը,
 - ժ) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
 - ժա) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերությամբ գործադիր տնօրենի հաշվետվությունների ընդունումը,
 - ժբ) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
 - ժգ) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
 - ժդ) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,
 - ժե) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգը և ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,
 - ի) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների (ներկայացուցչություններ, մասնաճյուղեր) և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների մասին որոշումների ընդունումը,
 - իա) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը,
 - իբ) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

իդ) օրենքով, սույն կանոնադրությամբ սահմանված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

4.13. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

- 1) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.
- 2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,
- 3) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում
- 4) սույն կանոնադրության 4.4. կետով սահմանված ժամկետի վրա հասնելու հիմքով,
- 5) եթե դադարել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.
- 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.
- 7) նրան առաջադրած անձի որոշմամբ, եթե նրան առաջադրել է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը.
- 8) նրա մահվան դեպքում.
- 9) եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում:

4.14. Հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

4.15. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

4.16. Հոգաբարձուների խորհուրդը վերահսկողություն է իրականացնում հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև հիմնադրամի գործադիր տնօրենի գործունեության նկատմամբ:

4.17. Հոգաբարձուների խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Առանձին դեպքերում խորհրդի որոշումներն ընդունվում են հարցման միջոցով: Նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

4.18. Հոգաբարձուների խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հոգաբարձուների խորհուրդը ընդունում է որոշումներ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի /հիմնադրամի կառավարչի/ ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

4.19. Հոգաբարձուների խորհուրդը հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումն ընդունում է հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

4.20. Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները:

4.21. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի արձանագրությունները կազմվում են հայերեն: Դրանք կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

4.22. Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝

ա/ կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները,

բ/ գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում դրանք,

գ/ կազմակերպում է նիստի արձանագրության վարումը:

4.23. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

4.24. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամն իրավունք ունի՝

ա) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից հիմնադրամի միջոցների օգտագործման մասին,

բ) հետևելու հիմնադրամի գույքի պահպանմանը, ստուգելու հիմնադրամի փաստաթղթերը, այդ թվում՝ հաշվեկշիռը, ինչպես նաև գործունեության այլ ոլորտներ,

գ) հիմնադրամի գործադիր տնօրենից ու այլ աշխատողներից պահանջելու ցանկացած տվյալ ու հաշվետվություն,

դ) հիմնադրամի աշխատանքները բարելավելու նպատակով նրա կառավարման մարմիններին ներկայացնելու առաջարկություններ,

ե) սպառիչ տեղեկատվություն ստանալու հիմնադրամի գործունեության մասին,

զ) դուրս գալու հոգաբարձուների խորհրդից:

Ե) առաջարկություններ ներկայացնելու հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

ը) նախապատրաստելու և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

թ) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

ժ) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

5.2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամը պարտավոր է՝

- ա) մասնակցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերին.
- բ) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ հիմնադրամի շահերից:
- գ) հոգալ հիմնադրամի հեղինակության բարձրացման մասին,
- դ) աջակցել հիմնադրամի ներդրումների համալրմանը,
- ե) չխախտել հոգաբարձուների խորհրդի կանոնակարգի պահանջները:

5.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամը կարող է ունենալ օրենքով, սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով սահմանված այլ իրավունքներ և կրել այլ պարտավորություններ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

- 6.1. Հիմնադրամի կառավարիչը հիմնադրամի գործադիր տնօրենն է, որը վարում է հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է հոգաբարձուների խորհրդին:
- 6.2. Հիմնադրամի գործադիր տնօրենը՝
- ա) առանց լիազորագրի գործում է հիմնադրամի անունից,
 - բ) հիմնադրամը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
 - գ) տնօրինում է հիմնադրամի գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները՝ համաձայն հոգաբարձուների խորհրդի հաստատված բյուջեի, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից,
 - դ) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային),
 - ե) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
 - զ) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափը, կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև,
 - է) հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
 - ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին.
 - ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
 - ի) տալիս է լիազորագրեր,

յ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1. Հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմիններ՝ իրենց իրավասություններին և ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգին համապատասխան:
- 7.2. Հիմնադրամի կողմից օրենքների պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերվելու դեպքում, որոնք կարող են վերացվել հիմնադրամի ձեռնարկած միջոցառումներով, վերահսկողություն իրականացնող կամ պետական լիազորված մարմինը հիմնադրամ է ուղարկում գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով խախտումների վերացման կարգն ու ժամկետները:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 8.1. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն:
- 8.2. Հիմնադրամը պարտավոր է պահպանել իր գործունեության հրապարակայնությունը Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 9.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 9.2. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ՝ հիմնադրամի գույքը փոխանցվում է նվիրատուներին՝ նրանց կողմից հիմնադրամին տրամադրված միջոցների չափին համապատասխան, սակայն ոչ ավելի, քան նվիրաբերած գումարը, իսկ դրա անհնարինության դեպքում պետական բյուջե:

